ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հոկտեմբերի 2024 թվականի N 1711-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 867 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման, դեղերի մեծածախ իրացման, բժշկական արտադրատեսակների արտադրության, բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 867 որոշման հավելվածներում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) N 1 հավելվածի՝

ա. 11-րդ կետի 5-րդ ենթակետը «պատճենները» բառից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) գործունեություն իրականացնող տնտեսավարողների, որոնց դեպքում՝ հիմք ընդունելով «Ավիացիայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ մասերի դրույթները, ներկայացվում է օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ» բառերով,

բ. 25-րդ կետի 4-րդ ենթակետը «չի պատկանում հայտատուին» բառերից հետո լրացնել «, իսկ գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում՝ չի ներկայացվել օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկությունները՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալները,» բառերով,

գ. N 1 ձևով հաստատված «ԴԵՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» հայտը «հատակագծի պատճենները» բառերից հետո լրացնել «կամ օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային

չափերի մասին տվյալներ (ներկայացվում է գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում)» բառերով.

2) N 3 հավելվածի՝

ա. 9-րդ և 9.1-ին կետերի 2-րդ ենթակետերը «պատճենները» բառից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) գործունեություն իրականացնող տնտեսավարողների, որոնց դեպքում՝ հիմք ընդունելով «Ավիացիայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ մասերի դրույթները, ներկայացվում է օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ» բառերով,

բ. 45-րդ կետի 4-րդ ենթակետը «տարածքի հատակագիծը» բառերից հետո լրացնել «, իսկ գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում՝ չի ներկայացվել օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկությունները՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալները,» բառերով,

գ. N 1 ձևով հաստատված «ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» հայտի 11-րդ կետը և N 6 ձևով հաս-

տատված «ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ ԵՎՍ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» հայտի 12-րդ կետը «հատակագծի պատճենները» բառերից հետո լրացնել «կամ օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ (ներկայացվում է գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում)» բառերով,

դ. N 7 ձևով հաստատված «ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ» հայտի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«11. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

լիցենզիայի բնօրինակը, լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները կամ օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ (ներկայացվում է գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում)։».

3) N 5 հավելվածի՝

ա. 10-րդ կետի 2-րդ ենթակետը «ֆիզիկական անձանց» և 10.1-ին կետի 2-րդ ենթակետը «պատճենները» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) գործունեություն իրականացնող տնտեսավարողների, որոնց դեպքում՝ հիմք ընդունելով «Ավիացիայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ մասերի դրույթները, ներկայացվում է օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ» բառերով,

բ. 20-րդ կետի 4-րդ ենթակետը «տարածքի հատակագիծը» բառերից հետո լրացնել «, իսկ գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում՝ չի ներկայացվել օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկությունները՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալները,» բառերով,

գ. N 2 ձևով հաստատված «ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» հայտի 14-րդ կետը և N 8 ձևով հաստատված «ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ ԵՎՍ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» հայտի 15-րդ կետը «հատակագծի պատճենները» բառերից հետո լրացնել «կամ օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման

հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ (ներկայացվում է գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում)» բառերով,

դ. N 9 ձևով հաստատված «ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ» հայտի 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«14. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

լիցենզիայի բնօրինակը, լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները կամ օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ (ներկայացվում է գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում):».

4) N 9 հավելվածի՝

ա. 9-րդ կետի 2-րդ ենթակետում «հատակագիծը» բառը փոխարինել «հատակագծի պատճենները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) գործունեություն իրականացնող տնտեսավարողների, որոնց դեպքում՝ հիմք ընդունելով «Ավիացիայի

մասին» օրենքի 12-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ մասերի դրույթները, ներկայացվում է օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ» բառերով,

բ. 10-րդ կետի 2-րդ ենթակետում «վկայականը» բառը փոխարինել «վկայականի» բառով, «հատակագիծը» բառը՝ «հատակագծի պատճենները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) գործունեություն իրականացնող տնտեսավարողների, որոնց դեպքում՝ հիմք ընդունելով «Ավիացիայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ մասերի դրույթները, ներկայացվում է օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ» բառերով,

գ. 13-րդ կետի 4-րդ ենթակետը «տարածքի հատակագիծը» բառերից հետո լրացնել «, իսկ գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում՝ չի ներկայացվել օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկությունները՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալները,» բառերով,

դ. N 2 ձևով հաստատված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԻՐԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» հայտի 7-րդ կետում, N 3 ձևով հաստատված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԻՐԱՑՄԱՆ ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ ԵՎՍ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» հայտի 8-րդ կետում և N 4 ձևով հաստատված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆ-ՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԻՐԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽ-ՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» հայտի 8-րդ կետում «վկայականը» բառը փոխարինել «վկայականի» բառով, «հատակագիծը» բառը՝ «հատակագծի պատճենները կամ օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ (ներկայացվում է գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում)» բառերով, «եզրակացություն» բառը և դրա հոլովաձևերը՝ «եզրակացության պատճեն» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով.

5) N 17 հավելվածի՝

ա. 9-րդ և 10-րդ կետերի 2-րդ ենթակետերում «վկայականը» բառը փոխարինել «վկայականի» բառով, «հատակագիծը» բառը՝ «հատակագծի պատճենները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) գործունեություն իրականացնող տնտեսավարողների, որոնց դեպքում՝ հիմք ընդունելով «Ավիացիայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ մասերի դրույթները, ներկայացվում է օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի

մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ» բառերով,

բ. 13-րդ կետի 4-րդ ենթակետը «տարածքի հատակագիծը» բառերից հետո լրացնել «, իսկ գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում՝ չի ներկայացվել օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկությունները՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալները,» բառերով,

գ. N 2 ձևով հաստատված «ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» հայտի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացությունը,

լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները կամ օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզի-

կական և պարագծային չափերի մասին տվյալներ (ներկայացվում է գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում)։»,

դ. N 3 ձևով հաստատված «ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ ԵՎՍ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» հայտի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացությունը,

լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները կամ օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ (ներկայացվում է գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում)։»,

ե. N 4 ձևով հաստատված «ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ» հայտի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

լիցենզիայի բնօրինակը, փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացությունը, լիցենզավորման

ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները կամ օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ (ներկայացվում է գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում):».

6) N 19 հավելվածի՝

ա. 6-րդ և 7-րդ կետերի 2-րդ ենթակետերում «վկայականը» բառը փոխարինել «վկայականի» բառով, «հատակագիծը» բառը՝ «հատակագծի պատճենները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) գործունեություն իրականացնող տնտեսավարողների, որոնց դեպքում՝ հիմք ընդունելով «Ավիացիայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ մասերի դրույթները, ներկայացվում է օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ» բառերով,

բ. 10-րդ կետի 4-րդ ենթակետը «տարածքի հատակագիծը» բառերից հետո լրացնել «, իսկ գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման

թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում՝ չի ներկայացվել օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկությունները՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալները,» բառերով,

գ. N 2 ձևով հաստատված «ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» հայտի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացությունը, լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները կամ օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ (ներկայացվում է գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում):»,

դ. N 3 ձևով հաստատված «ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ ԵՎՍ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» հայտի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացությունը, լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները կամ օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին տվյալներ (ներկայացվում է գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում):»,

ե. N 4 ձևով հաստատված «ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ» հայտի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7. Կից ներկայացնում եմ (պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկ)՝

լիցենզիայի բնօրինակը, փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված դրական փորձագիտական եզրակացությունը, լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի և իրավասու մարմնի կողմից հայտատուի անվամբ տրված՝ գործունեության համար նախատեսված տարածքի հատակագծի պատճենները կամ օդանավակայանի կոնցեսիոների հետ կնքված առանձին տնտեսական գործունեության թույլտվության պայմանագրի պատճենը և այդ պայմանագրով տնտեսավարողին օգտագործման հանձնվող տարածքի մասին տեղեկություններ՝ օդանավակայանի ներքին տարածքի սխեմայում նշագծման (շտրիխապատման) եղանակով, ինչպես նաև տարածքի մակերեսի, ֆիզիկական և պարագծային չափերի մասին

տվյալներ (ներկայացվում է գործունեությունը Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ոչ ավիացիոն ծառայությունների համար առևտրային շահագործման թույլտվության պայմանագրով (ենթակոնցեսիա) իրականացնելու դեպքում)։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

31.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ